ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ

11.11.2014. Հիշատակ Սուրբ Դեմետրիոս վկայի եւ Սուրբ Բասիլիսկոս քահանայի

15.11.2014. Հիշատակ Սուրբ Անդրեաս եւ Սուրբ Փիլիպպոս առաքյալների

16.11.2014. Բարեկենդան Հիսնակաց Պահոց

Հիսնակը հիսնօրյա պահքի շրջանն է, որը նախորդում է Աստվածահայտնության տոնին: Հիսնակաց Բարեկենդանը 7 օրերի շարժականությամբ նշվում է նոյեմբերի 15-ից մինչեւ 21-ն ընկած ժամանակահատվածում:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

«ԿԱԶԲԵԳԻ» ԱՆՑԱԿԵՏԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՇՈՒՐՋՕՐՅԱ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳՈՎ

Ռուս-վրացական սահմանագծի «Կազբեգի» անցակետը վերսկսել է շուրջօրյա պայմանակարգով աշխատանքը:

Հիշեցնենք, որ վերահսկիչ անցակետի գործունեության աշխատաժամանակը սահմանափակվեց օգոստոսի 20-ին տեղի ունեցած տարերային աղետի՝ հեղեղումների եւ սողանքի հետեւանքով: Տարերային աղետը նշանակալի վնաս հասցրեց անցակետի ենթակառույցներին: Սկզբնական փուլում, երբ իրականացվում էին անցակետի մաքրման եւ վերականգնման աշխատանքները, անցակետը աշխատում էր ժամը 7-ից մինչեւ 18-ը: Ավելի ուշ, աշխատանքային ժամանակը ավելացվեց եւս երկու ժամով, իսկ հիմա անցակետը վերադառնում է շուրջօրյա աշխատակարգի:

Ներկա դրությամբ, «Կազբեգի» անցակետում բոլոր պայմանները ստեղծված են մաքսային ընթացակարգն ու քաղաքացիներին սպասարկումն անխափան իրականացնելու համար:

ՏԱՐԵՐՔ

ԱՋԱՐԻԱՅՈՒՄ ՏԵՂԱՑԱԾ ՁՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՁՐԵՎԸ ԼՈՒՐՋ ՎՆԱՍՆԵՐ ԵՆ ՊԱՏՃԱՌԵԼ

Նոյեմբերի 3-ից Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում տեղացած առատ ձյան եւ տեղատարափ անձրեւների պատճառով վնասվել են էլեկտրահաղորդման գծերը, ինչի հետեւանքով առանց էլեկտրականության է մնացել ավելի քան 10 հազար տուն:

«Ավելի քան 10 հազար բաժանորդներ էլեկտրաէներգիա չեն ստանում տարածաշրջանում, հատկապես՝ Աջարիայի վերին մասում, արդեն տարվում են վերականգնողական աշխատանքներ»,- հայտնեց Աջարիայի կառավարության նախագահ Արչիլ Խաբաճեն: Նրա խոսքով, հազարավոր բաժանորդներ զրկված են նաեւ ջրամատակարարումից:

Ձյան առատ տեղումները, ձնահողմը եւ տեղատարափ անձրեւներն արդեն երկրորդ օրն է շարունակվում են Աջարիայի տարածաշրջանում ու Արեւմտյան Վրաստանում: Անբարենպաստ եղանակը վնաս է հասցրել նաեւ Բաթումի քաղաքին: Ջրով ողողվել են տների ու շենքերի առաջին հարկերը:

Ծովում մոլեգնող 6 բալանոց փոթորիկը կաթվածահար է արել Վրաստանի Փոթի քաղաքի նավահանգստի աշխատանքը, ուստի անհնարին է դարձել նավերի ընդունումն ու ուղարկումը:

Նավահանգստի տարածքում մոբիլիցազվել են համապատասխան ծառայությունների աշխատակիցները:

ՀԻՇԱՏԱԿ

ՄԵԿ ՏԱՐԻ ԱՌԱՆՑ ՄԱՐՏՈՒՆԻ ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ



Ասում են՝ մարդը պիտի այնպես ապրի, որ իր ներկայությամբ լցնի շրջապատը, եւ այնպես լցնի, որ իր բացակայությունը զգալի լինի, որ մարդիկ զգան միայն նրա ներկայության կարիքը... Կյանքը, սակայն իր օրինաչափություններն ունի, ու դրանցից ամենաանբեկանելին մահն է... Մահվան դեմ անզոր գտնվեց եւ մեր խմբագրության ամենավաստակաշատ, ամենաերեւելի աշխատակիցներից մեկը՝ հմուտ ու բազմափորձ թարգմանիչ Մարտունի Խաչվանքյանը: Ու վերոնշյալ միտքը, որով սկսեցի հիշատակի խոսքս, այնքա՜ն ճիշտ է համատեղվում Խաչվանքյանի ապրած կյանքի հետ...

...Արդեն մեկ տարի է, ինչ մեզ հետ չէ մեր շատ սիրելի Խաչվանքյանը, սակայն այդ ամբողջ ընթացքում չեղավ գրեթե մեկ օր, որ մենք չհիշենք նրան ու չզգանք նրա կարիքը՝ թարգմանությունների դեպքում, քաղաքական մեկնությունների դեպքում, մեր ու համաշխարհային մեծաց մասին խոսելիս, մարդկային հարաբերությունների մասին խոսելիս եւ, ընդհանրապես, ցանկացած թեմայի (նրան մենք քայլող հանրագիտարան էինք անվանում): ...Ու նաեւ կատակելիս... Ուրախության պահերին... Քանզի, իմաստուն ու շատ կարդացած լինելուց բացի, նա պարզապես հումորի շտեմարան էր՝ այնքան նման իր հանճարեղ հորեղբորորդուն՝ մեծանուն Կարպ Խաչվանքյանին...

Ու բացառիկորեն քաղաքավարի, բարեկիրթ, ազնիվ, հագուկապը՝ միշտ կոկ ու գեղեցիկ, ճշտապահ ու պարտաճանաչ... Ամեն ինչում... Ե՛վ գործում՝ աշխատանքային պարտականություններ կատարելիս, ե՛ւ առօրյա մարդկային, ընկերական հարաբերություններում, ե՛ւ ընտանիքում...

...Այսպես ահա ապրեց իր կյանքը Մարտունի Խաչվանքյանը: Ու հենց դրա համար էլ մինչեւ այսօր մենք զգում ենք նրա ներկայության կարիքը, բայց... ավա՜ղ... Մահվան դեմ բոլորս ենք անզոր... ու հիմա մի անգամ եւս՝ նրա առաջին տարելիցի օրերին ամբողջ խմբագրությունով գլուխ ենք խոնարհում նրա գեղեցիկ ու անմար հիշատակի առջեւ ու ասում՝ բարի՜ հինջ Քեզ, Մարտունի Խաչվանքյան... Թող երկնային բարի հրեշտակները պահպանեն Քո հավերժական քունը...

«Վրաստան» թերթի կոլեկտիվի անունից՝ Անահիտ Բոստանջյան

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Վրաստանի կրթության միջազգային կենտրոնը արտասահմանում մագիստրոսի եւ դոկտորի ծրագրերով ուսումը շարունակել ցանկացող վրաստանցի ուսանողների համար հայտարարել է ուսման ֆինանսավորման մրցույթ:

Փաստաթղթերի ընդունումն սկսվել է նոյեմբերի 3-ին եւ կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 19-ը ներառյալ: Ուսանողները անցնելու են երեք փուլից բաղկացած մրցույթ: Արդյունքները կգնահատեն կառավարության եւ կրթության ոլորտում գործող ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Կրթության միջազգային կենտրոնում անցկացված հանդիպմանը մրցույթի պայմանները ներկայացրին Վրաստանի կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Նինո Կոբախիձեն եւ կենտրոնի տնօրեն Նինո Ճելիձեն:

Ֆինանսավորման համար առաջնահերթային են հայտարարվել ագրարային, ստույգ եւ տեխնիկական գիտությունները, բնագիտությունն ու սոցիալական ոլորտը: Մրցույթին կարող են մասնակցել նաեւ քաղաքացիական հատվածում գործող անձինք, ովքեր ցանկանում են բարձրացնել իրենց որակավորումը:

Բուժում եմ թութքի (հեմորոյի) բոլոր՝ անգամ ամենածանր դրսեւորումները. արյունահոսություն, ճեղքումներ, հանգույցի դուրսընկնելը՝ միայն բուսական, բնական բաղադրիչների հիման վրա պատրաստված ներքին ընդունման դեղորայքով: Արդյունքը 100 տոկոսանոց է: 48 ժամում վերանում է արյունահոսությունը, իսկ 72 ժամում լրիվությամբ ազատվում եք ցավերից: Հեռախոս՝ 5-99-53-08-25, 2-95-40-58, Ջեմալի:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 3.Մարդաշատ, շարժումը շատ: 7.Փարոս, ուղղությունը ցույց տվող: 10.Ամուր, կարծր: 11.Մարդու կամ կենդանու ներքին օրգան: 12.Սպիտակախառն, սեւ ու սպիտակ մազերով: 15.Եզի, ցուլի գլխի հարված: 18.Կռիլովի, Խնկո Ապոր ...ները: 21.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 23.Թագ ու ...: 25.Վրաց շախմատիստուհի ... Չիբուրդանիձե: 26.Ալիք: 27.Երամ, վտառ, բազմություն: 28.Գործվածքի տեսակ: 29.Վրաց բանաստեղծուհի ... Ակոբիձե: 30. Վրաց մեծ բանաստեղծ Ռուսթավելու անունը: 31.Ոտնաման, ոտքի հագնելիք: 33.... ու բույր: 34.Նորմա, չափաբաժին: 35.Բազազ Արտեմի կինը («Գիքոր»): 36.Գին, արժեք: 39.Քիթ ու ...: 41.Մսով ճաշատեսակ: 43.Ոչ հաստատուն, տատանվող: 44.Վրաստանում քրիստոնեություն տարածած կույս: 45.Ամսական մեկ անգամ լույս տեսնող լրատվամիջոց: 48.Հայտնի կինոդերասան Օմար ...:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Գիշատիչ թռչուն: 2.Տուրգենեւի ստեղծագործություններից: 4.Դավաճան, ծախու հոգի (առաքյալի անունով): 5.Գինու շշի փական: 6.Հեղուկի չափման միավոր: 8.Գործարանի արտադրամաս: 9.Մարիա եւ ... Կյուրիներ: 13.Ամա, պապակ: 14.«...ը գործի կեսն է»: 16.ԱՄՆ-ի նահանգներից: 17.Եվրոպական երկիր: 18.Փեթակի «շինանյութ»: 19.Մթնոլորտի մաս կազմող գազ: 20.Մամիկոնյանների գավառը: 22....-Գոմոր: 23.Հայ երգիչ Պողոսյանը: 24.Գեղեցկություն, հրապուրանք: 31.Երկկենցաղ կենդանի: 32.Նավի մաս: 37.Քաղաք Վրաստանում: 38.Ռուսական էստրադայի պրիմադոննա: 40.Բռնցքամարտի արենա: 41.Գետ Վրաստանում: 42.«Մայրիկ» ֆիլմի ռեժիսոր Վեռնոյը: 46.Կերակրել, ուտեցնել: 47.Գերմանացի հեքիաթագիր ... եղբայրներ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Կվաս: 3.Կարմրուկ: 6.Տաբակով: 10.Սյունիք: 11.Բունին: 13.Ավար: 14.Անակոնդա: 15.Կռիլով: 18.Պատմուճան: 19.Ագարակ: 21.Գատչինա: 25.Կոկանդ: 28.Պիղատոս: 32.Լամարա: 33.Արքանզաս: 34.Խանդակ: 37.Գրավական: 38.Կամո: 39.Բրոնզ: 40.Տատմեր: 41.Նստարան: 42.Բրուքլին: 43.Հարճ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Կասիկ: 2.Ամուրի: 3.Կաքավ: 4.Մրուր: 5.Կոն: 6.Տրենինգ: 7.Բիսկվիտ: 8.Կարնեգի: 9.Վերանդա: 11.Բացարկ: 12.Ինսուլա: 16.Ռեգբի: 17.Լերմա: 20.Կիո: 22.Աուլ: 23.Չաման: 24.Նորմա: 26.Կլավիր: 27.Դիաբազ: 28.Պինգվին: 29.Ղեկապետ: 30.Տաղավար: 31.Սախալին: 34.Խոտան: 35.Դոմրա: 36.Կարիճ: 38.Կնիք: 39.Բիբ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445